ԵՊՀ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԵՊՀ-ԳՀԱՇՁԲ-19/84»

ք. Երևան «10» հունիսի 2019 թ.

«Երևանի պետական համալսարան» Հիմնադրամն, ի դեմս ռեկտոր Գ. Գևորգյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԹԱՍԿ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Թևոսյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տպագրական աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

1) նախագծման համար հիմք հանդիսացող նախագծային առաջադրանքների տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնել շինարարական ծրագրի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,

4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով,

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 2 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող

աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 2 502 000 (երկու միլիոն հինգ հարյուր երկու հազար) ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ, ներառյալ ԱԱՀ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

7.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման

դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.10 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.12 Պայմանագիրը կազմված է **5** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.14 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«ԵՊՀ» հիմնադրամ	«ԹԱՍԿ» ՍՊԸ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 1	ք. Երևան, Դավիթաշեն 1 թաղ., 51-21
'Արդշինբանկ' ՓԲԸ	«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 01506928	Հ/Հ 1570004206280100
Հ/Հ 247010000906	ՀՎՀՀ 01237925
ռեկտոր՝ Գ. Գևորգյան	տնօրեն՝ Ա. Թևոսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«10» հունիսի 2019 թ. կնքված
«ԵՊՀ-ԳՀԱՇՁԲ-19/84» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Աշխատանքի								
հրավերով նախատեսված ցուցանիշի համարը	գնումների պլանով նախատես-ված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգ-ման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	Ժամ-կետը
1	79821200/75	Չափսը՝ A5, էջերի քանակը 332, տպագ. 1+1, թուղթը՝ 80 գր. օֆսեթ, ֆորմաների պատրաստումը՝ CTP Շապիկը՝ կավճապատ 300 գր., (օֆսեթ տպագրություն), անփայլ լամինացիա, տպագր. 4+0, կազմման եղանակը՝ թելակար, ջերմասոսինձ Տպագրությունը բարձ որակի (կետայնությամբ): Տպագրության որակի համար տրամադրվում է համանման գրքի նմուշ:	հատ	1740	174000	100	ք. Երևան, Ալ. Մա-նուկյան 1	հուլիս, 2019 թ.
2	79821200/76	Չափսը՝ A5, էջերի քանակը 72, տպագ. 1+1, թուղթը՝ 80 գր. օֆսեթ, ֆորմաների պատրաստումը՝ CTP Շապիկը՝ կավճապատ 300 գր., (օֆսեթ տպագրություն), անփայլ լամինացիա, տպագր. 4+0, կազմման եղանակը՝ ջերմասոսինձ Տպագրությունը բարձ որակի (կետայնությամբ): Տպագրության որակի համար տրամադրվում է համանման գրքի նմուշ:	հատ	600	60000	100	ք. Երևան, Ալ. Մա-նուկյան 1	հուլիս, 2019 թ.
3	79821200/77	Չափսը՝ A5, էջերի քանակը 86, տպագ. 1+1, թուղթը՝ 80 գր. օֆսեթ, ֆորմաների պատրաստումը՝ CTP Շապիկը՝ կավճապատ 300 գր., (օֆսեթ տպագրություն), անփայլ լամինացիա, տպագր.	հատ	720	108000	150	ք. Երևան, Ալ. Մա-նուկյան 1	հուլիս, 2019 թ.

		4+0, կազմման եղանակը՝ ջերմասոսինձ Տպագրությունը բարձ որակի (կետայնությամբ): Տպագրության որակի համար տրամադրվում է համանման գրքի նմուշ:						
4	79821200/78	Չափսը՝ A5, էջերի քանակը 408, տպագ. 1+1, թուղթը՝ 80 գր. օֆսեթ, ֆորմաների պատրաստումը՝ CTP Շապիկը՝ N 4, կազմի համար օգտագործվող թուղթը 150 գր. կավճապատ, տպագրություն 4+0, անփայլ լամինացիա, (օֆսեթ տպագրություն) կազմման եղանակը՝ թելակար, ջերմասոսինձ Տպագրությունը բարձ որակի (կետայնությամբ): Տպագրության որակի համար տրամադրվում է համանման գրքի նմուշ:	հատ	2700	540000	200	ք. Երևան, Ալ. Մանուկյան 1	հուլիս, 2019 թ.
5	79821200/79	Չափսը՝ A5, էջերի քանակը 160, տպագ. 1+1, թուղթը՝ 80 գր. օֆսեթ, ֆորմաների պատրաստումը՝ CTP Շապիկը՝ կավճապատ 300 գր., (օֆսեթ տպագրություն), անփայլ լամինացիա, տպագր. 4+0, կազմման եղանակը՝ թելակար, ջերմասոսինձ Տպագրությունը բարձ որակի (կետայնությամբ): Տպագրության որակի համար տրամադրվում է համանման գրքի նմուշ:	հատ	1200	120000	100	ք. Երևան, Ալ. Մանուկյան 1	հուլիս, 2019 թ.
6	79821200/80	Չափսը՝ A5, էջերի քանակը 194, տպագ. 1+1, թուղթը՝ 80 գր. օֆսեթ, ֆորմաների պատրաստումը՝ CTP Շապիկը՝ կավճապատ 300 գր., (օֆսեթ տպագրություն), անփայլ լամինացիա, տպագր. 4+0, կազմման եղանակը՝ թելակար, ջերմասոսինձ Տպագրությունը բարձ որակի (կետայնությամբ): Տպագրության որակի համար	հատ	1296	129600	100	ք. Երևան, Ալ. Մանուկյան 1	հուլիս, 2019 թ.

		տրամադրվում է համանման գրքի նմուշ:						
7	79821200/81	Չափսը՝ A5, էջերի քանակը 152, տպագ. 1+1, թուղթը՝ 80 գր. օֆսեթ, ֆորմաների պատրաստումը՝ CTP Շապիկը՝ կավճապատ 300 գր., (օֆսեթ տպագրություն), անփայլ լամինացիա, տպագր. 4+0, կազմման եղանակը՝ թելակար, ջերմասոսինձ Տպագրությունը բարձ որակի (կետայնությամբ): Տպագրության որակի համար տրամադրվում է համանման գրքի նմուշ:	հատ	1104	110400	100	ք. Երևան, Ալ. Մանուկյան 1	հուլիս, 2019 թ.
8	79821200/82	Չափսը՝ A5, էջերի քանակը 284, տպագ. 1+1, թուղթը՝ 80 գր. օֆսեթ, ֆորմաների պատրաստումը՝ CTP Շապիկը՝ կավճապատ 300 գր., (օֆսեթ տպագրություն), անփայլ լամինացիա, տպագր. 4+0, կազմման եղանակը՝ թելակար, ջերմասոսինձ Տպագրությունը բարձ որակի (կետայնությամբ): Տպագրության որակի համար տրամադրվում է համանման գրքի նմուշ:	հատ	1500	300000	200	ք. Երևան, Ալ. Մանուկյան 1	հուլիս, 2019 թ.
9	79821200/83	Չափսը՝ A5, էջերի քանակը 294, տպագ. 1+1, թուղթը՝ 80 գր. օֆսեթ, ֆորմաների պատրաստումը՝ CTP Շապիկը՝ կավճապատ 300 գր., (օֆսեթ տպագրություն), անփայլ լամինացիա, տպագր. 4+0, կազմման եղանակը՝ թելակար, ջերմասոսինձ Տպագրությունը բարձ որակի (կետայնությամբ): Տպագրության որակի համար տրամադրվում է համանման գրքի նմուշ:	հատ	1476	147600	100	ք. Երևան, Ալ. Մանուկյան 1	հուլիս, 2019 թ.
11	79821200/85	Չափսը՝ A5, էջերի քանակը 226, տպագ. 1+1, թուղթը՝ 80 գր. օֆսեթ, ֆորմաների պատրաստումը՝ CTP	հատ	1170	234000	200	ք. Երևան, Ալ. Մանուկյան 1	հուլիս, 2019 թ.

		Շապիկը՝ կավճապատ 300 գր., (օֆսեթ տպագրություն), անփայլ լամինացիա, տպագր. 4+0, կազմման եղանակը՝ թելակար, ջերմասոսինձ Տպագրությունը բարձ որակի (կետայնությամբ): Տպագրության որակի համար տրամադրվում է համանման գրքի նմուշ:						
12	79821200/86	Չափսը՝ A5, էջերի քանակը 168, տպագ. 1+1, թուղթը՝ 80 գր. օֆսեթ, ֆորմաների պատրաստումը՝ CTP Շապիկը՝ կավճապատ 300 գր., (օֆսեթ տպագրություն), անփայլ լամինացիա, տպագր. 4+0, կազմման եղանակը՝ թելակար, ջերմասոսինձ Տպագրությունը բարձ որակի (կետայնությամբ): Տպագրության որակի համար տրամադրվում է համանման գրքի նմուշ:	հատ	954	95400	100	ք. Երևան, Ալ. Մա-նուկյան 1	հուլիս, 2019 թ.
13	79821200/87	Չափսը՝ A5, էջերի քանակը 200, տպագ. 1+1, թուղթը՝ 80 գր. օֆսեթ, ֆորմաների պատրաստումը՝ CTP Շապիկը՝ կավճապատ 300 գր., (օֆսեթ տպագրություն), անփայլ լամինացիա, տպագր. 4+0, կազմման եղանակը՝ թելակար, ջերմասոսինձ Տպագրությունը բարձ որակի (կետայնությամբ): Տպագրության որակի համար տրամադրվում է համանման գրքի նմուշ:	հատ	1050	105000	100	ք. Երևան, Ալ. Մա-նուկյան 1	հուլիս, 2019 թ.
14	79821200/88	Չափսը՝ A5, էջերի քանակը 304, տպագ. 1+1, թուղթը՝ 80 գր. օֆսեթ, ֆորմաների պատրաստումը՝ CTP Շապիկը՝ N 4, կազմի համար օգտագործվող թուղթը 150 գր. կավճապատ, տպագրություն 4+0, անփայլ լամինացիա, (օֆսեթ տպագրություն) կազմման եղանակը՝ թելակար, ջերմասոսինձ	հատ	2040	204000	100	ք. Երևան, Ալ. Մա-նուկյան 1	հուլիս, 2019 թ.

		Տպագրությունը բարձ որակի (կետայնությամբ): Տպագրության որակի համար տրամադրվում է համանման գրքի նմուշ:						
15	79821200/89	Չափսը՝ A5, էջերի քանակը 372, տպագ. 1+1, թուղթը՝ 80 գր. օֆսեթ, ֆորմաների պատրաստումը՝ CTP Շապիկը՝ կավճապատ 300 գր., (օֆսեթ տպագրություն), անփայլ լամինացիա, տպագր. 4+0, կազմման եղանակը՝ թելակար, ջերմասոսինձ Տպագրությունը բարձ որակի (կետայնությամբ): Տպագրության որակի համար տրամադրվում է համանման գրքի նմուշ:	հատ	1740	174000	100	ք. Երևան, Ալ. Մանուկյան 1	հուլիս, 2019 թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«ԵՊՀ» հիմնադրամ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 1
'Արդշինբանկ' ՓԲԸ
ՀՎՀՀ 01506928
Հ/Հ 247010000906
ռեկտոր՝ Գ. Գևորգյան

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԹԱՍԿ» ՍՊԸ
Երևան, Դավիթաշեն 1 թաղ., 51-21
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570004206280100
ՀՎՀՀ 01237925
տնօրեն՝ Ա. Թևոսյան

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2
«10» հունիսի 2019 թ. կնքված
«ԵՊՀ-ԳՀԱՇՁԲ-19/84» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79821200/75	**Գրիգորյան Ա., Դարբինյան Ա., Ստեփանյան Ն.** Deepdive into Mathematics	0 %	0 %	0 %	0 %	0%	0%	174000	174000	174000	174000	174000	174000	174000
2	79821200/76	Մխիթարյանների մամուլը *(«ԲԱԶՄԱՎԷՊ»-ը 1843-1880-ական թթ.) (դասախոսություններ)*	0 %	0 %	0 %	0 %	0%	0%	60000	60000	60000	60000	60000	60000	60000
3	79821200/77	**Գուլյան Անահիտ** Կյանքի ապահովագրության մաթեմատիկա *Ուսումնամեթոդական ձեռնարկ*	0 %	0 %	0 %	0 %	0%	0%	108000	108000	108000	108000	108000	108000	108000
4	79821200/78	**Կիրակոսյան Արման** Ամերիկյան դիվանագիտությունը և Հայոց ցեղասպանությունը	0 %	0 %	0 %	0 %	0%	0%	540000	540000	540000	540000	540000	540000	540000

5	79821200/79	**Яралян К.** Морфология сетевого общества и проблема социальной идентичности	0 %	0 %	0 %	0 %	0%	0%	120000	120000	120000	120000	120000	120000	120000
6	79821200/80	**Ավետիսյան Ղ.** Յուրային-օտար. սոցիոմշակութայ ին համատեքստ	0 %	0 %	0 %	0 %	0%	0%	129600	129600	129600	129600	129600	129600	129600
7	79821200/81	**Զաքարյան Ս. Ա.** Սուրբ Հովհան Օձնեցի. Իմաստասեր կաթողիկոսը	0 %	0 %	0 %	0 %	0%	0%	110400	110400	110400	110400	110400	110400	110400
8	79821200/82	**Սահակյան Ա.** Դեղագործական գործունեության կառավարումը: Դեղագործական գործունեության կազմակերպումը եվ կարգավորումը	0 %	0 %	0 %	0 %	0%	0%	300000	300000	300000	300000	300000	300000	300000
9	79821200/83	**Առաքելյան Ա.** «Նիբելունգների երգից » մինչև «Հուլունքախաղ»	0 %	0 %	0 %	0 %	0%	0%	147600	147600	147600	147600	147600	147600	147600
11	79821200/85	**Ալբերտ Կիրակոսյան** Ատոմի ֆիզիկա	0 %	0 %	0 %	0 %	0%	0%	234000	234000	234000	234000	234000	234000	234000
12	79821200/86	**Ա. Մուրադյան, Պ. Պետրոսյան, Ս. Մխիթարյան, Լ. Գրիգորյան, Ժ. Խաչատրյան,Է. Քարաջյան** ԼԱԲՈՐԱՏՈՐ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ ՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՑՑ Էլեկտրականություն և մագնիսականություն	0 %	0 %	0 %	0 %	0%	0%	95400	95400	95400	95400	95400	95400	95400

13	79821200/87	**Ա. Մուրադյան, Ա. Գևորգյան, Հ. Երիցյան, Հ. Բաղալյան, Լ. Գրիգորյան, Մ. Հարությունյան, Ժ. Նինոյան, Լ. Հովհաննիսյան, Մ. Ստեփանյան** ԼԱԲՈՐԱՏՈՐ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ ՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ Օպտիկա և ատոմային ֆիզիկա	0 %	0 %	0 %	0 %	0%	0%	105000	105000	105000	105000	105000	105000	105000
14	79821200/88	**Մ. Հովհաննիսյան** Վահան Տերյանի չափածոյի լեզուն և ոճը	0 %	0 %	0 %	0 %	0%	0%	204000	204000	204000	204000	204000	204000	204000
15	79821200/89	**Ходжумян Белла Суреновна** Соматические фразеологизмы	0 %	0 %	0 %	0 %	0%	0%	174000	174000	174000	174000	174000	174000	174000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ԵՊՀ» հիմնադրամ
Ք. Երևան, Ալեք Մանուկյան 1
'Արդշինբանկ' ՓԲԸ
ՀՎՀՀ 01506928
Հ/Հ 247010000906
ռեկտոր՝ Գ. Գևորգյան

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ԹԱՍԿ» ՍՊԸ
Ք. Երևան, Դավիթաշեն 1 թաղ., 51-21
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570004206280100
ՀՎՀՀ 01237925
տնօրեն՝ Ա. Թևոսյան

(ստորագրություն)
Կ.Տ